

Հինգերորդ հաղորդում

**Բնական ընդունակությունը հակադրվում է  
կյանքի հասունության հարուցանված ընդունակությանը  
եկեղեցին՝ որպես Քրիստոսի օրգանական Մարմինը կառուցելու համար**

Գրվածքների ընթերցում. Գ Թգ 3:1, 11:1-8, Հս 9:14, Ա Կրթ 1:24, 30, Եսյ 45:15,  
37:31, Մտք 6:6

**I. Սոլոմոնը դարձավ իմաստության մարդ և հասկացողության մարդ (Բ ՄՏց  
1:10, հմմտ Կղս 2:2թ-3). սակայն, քանի որ նա բազմաթիվ հեթանոս կանանց  
առավ ու երկրպագեց նրանց կուռքերին և կառուցեց տեղեր, որպեսզի մար-  
դիկ կուռքերի երկրպագեն, նա կորցրեց իր՝ Աստծուց տրված իմաստությու-  
նը և Աստծուց տրված հասկացողությունը. նա շատ անմիտ դարձավ ու վճառ  
հասցրեց իր բազավորությանը՝ Գ Թգ 3:1, 11:1-8.**

- Ա. Սոլոմոնի հայրը՝ Դավիթը, մի մարդ, որ Աստծու սրտի համաձայն էր,  
ձախողվեց իր ցանկությանը տրվելու այս նույն կոպիտ ու տգեղ մեղքի  
հարցում (Բ Թգ 11). Սոլոմոնի ձախողումը սատանայական այս գայ-  
թակղության հարցում շատ ավելի մեծ էր, քան իր հոր ձախողումը. նրա  
անկումը պայմանավորված էր՝ բազմաթիվ օտար կանանց սիրելու տեն-  
չանքին տրվելով (Գ Թգ 11:1-3), քողնելով Աստծուն, ով երկու անգամ  
հայտնվեց նրան (իս. 9թ), և հեթանոս կուռքերին երկրպագելով իր սիրած  
օտար կանանց կողմից հրապորվելու միջոցով՝ խս. 4-8:
- Բ. Սոլոմոնը յոթ հարյուր կին և երեք հարյուր հարճ ուներ (իս. 3). նրանց  
ցանկությունը բավարարելու համար նա բարձր տեղեր կառուցեց. նրա  
կանայք «նրա սիրտը դարձրին դեպի այլ աստվածները» (իս. 4). «Սոլո-  
մոնը զնաց վիդոնացիների Աստարովք աստվածուին և Մեղքոմի՝ ամմո-  
նացիների գարշանքի հետևից»՝ իս. 5:
- Գ. «Սոլոմոնը Քամովսի՝ Մովարի գարշանքի համար բարձր տեղ շինեց լե-  
ռան վրա, որը Երուսաղեմի առջև է, և Մողոքի՝ Ամմոնի զավակների գար-  
շանքի համար»՝ իս. 7.
1. Սոլոմոնի բազավորման ընթացքում տաճարը կառուցվեց Երուսա-  
ղեմում, և Տիրոջ փառքը լցրեց տաճարը. տաճարի կառուցման դա-  
րաշրջանն Խարայելի զավակների պատմության ոսկե ժամանակն  
էր՝ 8:10-11:
  2. Եզակի տեղը՝ Երուսաղեմը, խորհրդապատկերում է միասնություն,  
մինչդեռ բարձր տեղերը խորհրդապատկերում են բաժանություն.  
Ծիշտ ինչպես ամեն տեսակ չար ու գարշելի բաներն էին կապված  
բարձր տեղեր հիմնելու հետ, այնպես էլ, նորկտակարանյան եզրույթ-  
ներով ասած, ամեն տեսակ չարիք կապված է բաժանության հետ՝  
Ա Կրթ 1:10 և ծրգ 3:
  3. Հատկանշական է, որ Սոլոմոնը՝ հենց նա, ով, Աստծու ցանկութ-  
յան համաձայն, Աստծու ժողովրդի միասնության հողի վրա կա-

## ԵՐՈՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՅՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

ոուցել էր տաճարը, նախաձեռնեց բարձր տեղերը կրկին կառուցել՝  
Գ Թգ 11:6-8:

- Դ. Սրա պատճառով նրա հետնորդներն իրենց թագավորության իննառուն տոկոսից ավելին կորցրին, և Աստծու ընտրած ժողովուրդը շատ սերունադերի լնքացրում չարչարվեց իր միջավայրի բաժանությունից և խառնաշփորից. ի վերջո նրանք կորցրին Աստծու տված երկիրն ու կռապաշտության օտար երկներում դարձան գերի:
- Ե. Իսրայել ազգը Սողոմոնի ձախողման պատճառով դեռևս չարչարվում է. սա ի՞նչ նախազգուշացում և ահազանգ պետք է լինի մեզ համար: Մենք պետք է զգույշ լինենք. նույնիսկ տենչանքի տրվելու մի փոքր ձախողումը կարող է վնաս հասցնել եկեղեցական կյանքին ու սպանել եկեղեցական կյանքի հիանալի տեսանկյունները:
- Զ. Հետևաբար մենք պետք է զգույշ լինենք նույնիսկ ամենափոքր բանում. մենք պետք է ամեն ինչում հոգու համաձայն քայլենք (Հոմ 8:4, տես Օք 4:8-10), Աստծու մարդիկ պետք է Նրա հետ միասին ապրեն՝ միշտ ապավինելով Նրան ու Նրա հետ մեկ լինելով՝ Հս 9:14, Բ Կրթ 6:1ա, Ա Կրթ 3:9, Մտք 1:23:
- Է. Սողոմոնի մահը մոայլ հիասքափության ոլորտում էր (Գ Թգ 11:40-43). նրա փառքը խոտի ծաղկի պես ընկավ (Մտք 6:29, Ա Պտ 1:24), իսկ նրա հիանալի կարիերան դարձավ «ունայնությունների ունայնություն», որն ինքն էր քարոզել՝ Ժդկ 1:2:

### II. Մենք պետք է Սողոմոնի ձախողումը հոգևոր կյանքի լույսի ներքո տեսնենք.

- Ա. Սողոմոնը իմաստուն մարդ էր, բայց ոչ հոգևոր. ընդունակ մարդ էր, բայց ոչ կյանքի մարդ. նա Աստծու տված բարի երկիրն Աստծուց տրված իր շնորհի միջոցով ամենաբարձր մակարդակի վայելեց. սակայն հոգևոր կյանքի հասունության փոքր չափի հետևանքով նա իր տենչանքին անգուսապ կերպով անձնատուր լինելու պատճառով կտրվեց Աստծու տնտեսության մեջ բարի երկրի վայելքից՝ Ա Կրթ 2:14-15, 3:1, 3:
- Բ. Սողոմոնի՝ Աստծուց տրված իմաստությունը նրան իր օրերի աշխարհում մեծ դարձրեց. սակայն նրա իմաստությունը բացառապես ֆիզիկական ոլորտում էր՝ առանց որևէ հոգևոր տարրի. նրա իմաստությունը գալիք իրական իմաստության ստվեր էր, և այն լիովին տարբերվում էր Պողոսի իմաստությունից՝ 1:24, 30:
- Գ. Պողոսի իմաստությունը հոգևոր իմաստություն էր, որը վերաբերում էր Քրիստոսի՝ մեր սրտերում Իր տունը հաստատելու հետ (Եփս 3:17), մեր քայլքին և մեր էությունը հոգու համաձայն պահելուն (Հոմ 8:4) և երկու հոգիների, այս է՝ աստվածային Հոգու և մարդկային հոգու՝ որպես մեկ հոգի միաձուլված լինելուն՝ Խ. 16, Ա Կրթ 6:17:
- Դ. Աստծու տնտեսության խորհուրդները գլխավորապես Պողոսին էին բացահայտվել (Կղս 2:2, Եփս 3:3-5, 9-10). այսօր, եթե ուզում ենք իմանալ տիեզերքի բարձրագույն իմաստությունը, պետք է խորանանք Պողոսի Թղթերի բյուրեղացում-ուսումնասիրությունների մեջ. իրական իմաս-

## ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

տուրյունն Աստված է, ով մարմնավորված է Քրիստոսի մեջ, ով մեր մեջ դարձել է մեր իմաստությունը՝ մեզ Աստծու հետ մեկ դարձնելով և մեզ կյանքով և բնությամբ, բայց ոչ Աստվածությամբ Աստված դարձնելով. ուստի մենք դառնում ենք Եռամեկ Աստծու գլուխործոցը, Նրա պոեմը՝ ցուցադրելով Նրա անսահման իմաստությունը և աստվածային մտահղացումը՝ Ա Կրթ 1:24, 30, Եփս 2:10, 3:9-11:

**III. Սողոմոնը բնական ընդունակությամբ լի մարդ էր, բայց ոչ կյանքի մարդ, մի մարդ, ում իմաստությունը շնորհ էր, ոչ թե կյանքի չափ. նրա ձեռքբերումները վկայում էին Աստծու տված իմաստության շնորհի նրա կարողության մասին, այլ ոչ թե կյանքի հասունության ունակության դրսերումների՝ Եքր 6:1, Կղս 1:28-29, Փլա 3:12-15.**

- Ա. Մենք պետք է տեսնենք մեր բնական ունակության և այն ունակության տարրերությունը, որն անցել է մահվան և հարության միջով. մենք պետք է գիտակցենք, որ մեր բնական էությունը և բնական ունակությունն Աստծու բաներում անուժ են, անբավարար՝ Գրծ 7:22, Ելց 3:2-3, 14-15, Ա Կրթ 2:14, Փլա 3:3-9, Բ Կրթ 3:5-6:
- Բ. Մենք չպետք է Աստծու բաներում որևէ կերպ վստահենք մեր բնական էությանը, այլ պետք է սովորենք մերժել մեր բնական էությունը և ամեն ինչում վարժել մեր հոգին՝ Քրիստոսի Մարմինը օրգանապես կառուցելու համար՝ Փլա 3:3, Հոմ 8:4, Ա Տմբ 4:7:
- Գ. Տիրոջ վերականգնման մեջ մեր բնական էության համար ոչ մի տեղ չկա. Տիրոջ վերականգնման մեջ եկեղեցիները՝ որպես Քրիստոսի կենդանի Մարմնի մասեր, ինքնաբերաբար կմերժեն այն ամենը, ինչ բնական է՝ Ա Կրթ 12:12-13:
- Դ. Եկեղեցին կառուցելիս մեր մեջ եղող ամեն բնական բան պետք է ջախջախվի, նախքան մենք կարողանանք իրար միանալ. մենք կարող ենք կառուցվել միայն այն բանից հետո, երբ մեր բնական էությունը ջախջախված լինի՝ 566-րդ օրիներգ, 6 և 7-րդ տներ:
- Ե. Բնական ունակությունը եսակենտրոն է և մեզ մղում է հպարտանալու, ինչը հանգեցնում է պարծենալուն և ինքնափառավորմանը. հարություն առած ունակությունը չի հապատանում և չի պարծենում իրենով՝ հմմտ Կղս 1:17թ, 18թ, Փլա 3:3, Բ Կրթ 12:9:
- Զ. Բնական ունակությունը եսասեր է, և դրա բոլոր դիտավորությունները և խարդավանքները հանուն «ես»-ի են՝ առանց Աստծու կամքի որևէ նկատառման. հարուցանված ունակությունն Աստծու կամքի համար է. այն ջախջախվել է և «ես»-ի համար չէ, «ես»-ի ոչ մի տարր չունի՝ հմմտ Մտք 16:24:
- Է. Բնական ունակությունը մղում է անձնապաստանության և ինքնավստահության, սեփական անձով գործելու և ինքներս մեզնից և ոչ թե Աստծուց կախված լինելու. հարուցանված ունակությունն ապավիճում է Աստծուն և չի համարձակվում «ես»-ի համաձայն գործել, թեև իսկապես ունակ և կարող է դա անելու. հարուցանված ունակությունը

## ԵՐՐՈՐԴ ԵՎ ԶՈՐՐՈՐԴ ԹԱԳԱՎՈՐԱՅ ԳՐՔԵՐ

- վերահսկում է Սուրբ Հոգու կողմից և չի համարձակվում իր ցանկությունների համաձայն զործել՝ հմտ Բ Կրթ 1:8-9, 4:6-7, 12:7-9:
- Ը. Բնական ունակությունն աստվածային տարր չունի. նա իր սեփական փառքն է փնտրում և իր սեփական ցանկությունները բավարարում. այն միախառնված է մսեղիի և խառնվածքի տարրերի հետ. հետևաբար երբ նրան մերժում են, նա բորբոքվում է. հարուցանված ունակությունը մսեղիից զերծ է՝ հմտ Ա Թսղ 2:4:
- Թ. Բնական ունակությունը ժամանակավոր է և ունակ չէ փորձություններին, անհաջողություններին կամ հակառակություններին դիմակայելու. հարուցանված ունակությունը փառաբանում է Հորը՝ ընդունելով Հոր կամքը՝ Մտք 11:20-26, Հփ 2:19, Գրծ 2:24:
- Ժ. Նրանք, ովքեր բնական ունակությունների համաձայն են ծառայում, փափագում են պարզեատրվել կամ ուրիշների կողմից գնահատվել. նրանք, ովքեր հարուցանված ունակության համաձայն են ծառայում, փափագում են քրիստոսին շահել ու վճռականորեն ծգուում են Նրան հաճոյալի լինելու պատվին՝ Փլա 3:8, Ծնդ 15:1, Երր 11:5-6, Բ Կրթ 5:9:
- ԺԱ. Բնական ունակությունը սիրում է ինքն իրեն դրսւորել, մարդու կողմից ճանաչված լինել և իրեն ցույց տալ մարդու առջև. հարուցանված ունակությունը սիրում է ամեն ինչ զաղտնի անել և մեկ լինել «Իրեն թաքցնող Աստծու հետ» և «դեպի ներքև արմատակալել ու դեպի վերև պտղաբերել»՝ Եսյ 45:15, 37:31, Մտք 6:4, 6, 17-18:
- ԺԲ. Բնական ունակությունն ու կարողությունը՝ առանց կյանքի, նման են օձի, որը քունավորում է Աստծու մարդկանց. կյանքը նման է աղավնու, որն Աստծու ժողովրդին կյանք է մատակարարում և մեզ մղում դառնալու մեկը, ով իր մարդկայնությամբ արտահայտում է լիառատ Աստծուն՝ Նրա անուշահոտ առաքինությունների միջոցով Նրա հարուստ հատկանիշներով հանդերձ. կյանքը մեզ մղում է շուշանի պես դառնալու, որն աճում է փշոտ թիւրի մեջ ու նման է պայծառ աստղի, որ շողում է խավար գիշերում՝ Ելց 4:1-9, Մտք 3:16-17:
- ԺԳ. Ամեն անգամ, երբ մարդիկ փորձում են իրենց բնական ունակությունը եկեղեցի բերել, եկեղեցու իրականությունը կորչում է. միայն այն, ինչ անցնում է մահվան և հարության միջով, կարող է եկեղեցի բերվել՝ Ա Կրթ 3:16-17:
- IV. **Խրայելի ու Հուկայի քառասունմեկ քագավորները բարձրագույն պաշտոնի էին, քայլ նրանք քարի երկիրը վայելելու առումով զգույշ չէին. նույնիսկ Դավիթը լիովին չվայելեց քարի երկիրը. մենք պետք է նրանց օրինակը մեր հանդեպ կիրառենք.**
- Ա. Չար քագավորների շարիքի արմատը, ինչպես Խրայելի ժողովրդի շարիքի արմատը, այն էր, որ նրանք քողել էին հենց Աստծուն՝ որպես կենդանի ջրերի աղբյուրի, և շրջել դեպի հեթանոսական կուտքերը՝ որպես կոտրված ջրամբարներ, որոնք ջուր չեն պահում. այս երկու շարիքները նրանց խեղեցին կոապաշտության և տենչանքներին տրվելու մահվան ջրերում՝ 2:13:

## ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

- Բ. Այսօր մենք թագավորներ ենք, որոնք կյանքում թագավորում են Քրիստոսի հետ՝ ստանալով շնորհի և արդարության շնորհի առատությունը (Հոմ 5:10, 17). մենք պետք է ձգտենք հետևելու Պողոսի օրինակին, որը կարողացավ հոչակել, որ խաչվել է Քրիստոսի հետ և այլև ոչ թե ինքն է ապրում, այլ Քրիստոսն է ապրում իր մեջ (Գոտ 2:20). ճա ասաց, որ ապրում է Քրիստոսին Նրա մեծարման համար՝ ստանալով Հիսուս Քրիստոսի Հոգու առատ մատակարարումը, Մարմնի մատակարարումը՝ Փլա 1:19-21ա:
- Գ. Հարության մեջ Քրիստոսը դարձավ կենդանարար Հոգին՝ որպես Եռամեկ Աստծու ավարտունությունը (Ա Կրթ 15:45բ). այս աստվածային, համարովանդակ Հոգին մտնում է մեր հոգու մեջ և միաձուլվում մեր վերածնված հոգու հետ՝ Աստծուն և նարդուն, մարդուն և Աստծուն միաձուլված հոգում դարձնելով մեկ. երկու հոգիներն այժմ միաձուլված են որպես մեկ ամբողջություն՝ 6:17, Հոմ 8:16:
- Դ. Այսօր Հոգի Աստված համարովանդակ Հոգին է, բաղադրյալ Հոգին, օծող Հոգին, բացահայտող Հոգին և ավարտունացած Հոգին՝ որպես պատրաստված Եռամեկ Աստծու ավարտունությունը՝ Փլա 1:19, Ելց 30:22-25, Ա Հվի 2:27, Ա Կրթ 2:10, Հյու 22:17ա:
- Ե. Այսօր Տիրոջ վերականգնման մեջ մենք պետք է մեծ ուշադրություն դարձնենք միաձուլված հոգուն, մեր հոգու հետ միաձուլված Հոգուն և պետք է ապրենք, քայլենք և գոյատևենք այս միաձուլված հոգու մեջ և դրա համաձայն, որպեսզի կարողանանք իսկապես կյանքում թագավորել (Հոմ 8:4, 5:10, 17). այս միաձուլված հոգին Քրիստոսի Մարմնի սկիզբն է և կավարտունանա Նոր Երուսաղեմում՝ Եփս 1:17, 2:22, 3:5, 16, 4:23, 5:18, 6:18, Հյու 21:10: